ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 04-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի՝ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 50-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-34 հոդվածներով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 3 հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, 9 հոդվածով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի՝ կողմ-8 , դեմ-0 , ձեռնպահ-0 , քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է՝***

1. <<Տաթև համայնքի գյուղաշխատանքներ և բարեկարգում>> ՀՈԱԿ-ին սեփականության իրավունքով հանձնել համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ գույքը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. <<Տաթև համայնքի գյուղաշխատանքներ և բարեկարգում>> ՀՈԱԿ-ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ գույքը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել պայմանագրային հիմունքներով գույքի փոխանցումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԻԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԳՅՈՒՂԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ՀՈԱԿ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՈՒ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթևի համայնքային կազմակերպություններին գույք հանձնելու մասին Տաթև համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 50-Ա որոշման մեջ փոփոխություններն ու լրացումները պայմանավորված են՝ հանձնվող գույքի իրավական կարգավիճակի հստակեցմամբ: Հանձնվող գույքի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները արտացոլված են որոշման նախագծին կից հավելվածներում:

Տաթև համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Մարատ Գերասիմյան